

## ՎՈՒՇ-ԵՐԵԿՈՒՆ ԵՎ ԻՐ ՎԱԾ ՎԱՐԴԱՆԱՆՅ ՎԻՇԱՏԱԿԻՆ

«... Վարդան քաջ նահապետ, որ  
վանեցեր զթշնամին, վարդագոյն  
արեամբդ քո պսակեցեր զկեղեցի»  
(Շարակնոց)

Սույն թվականի փետրվարի 19-ին նախկին Ճեմարանի հանդիսությունների դահլիճում փեղի ունեցավ հուշ-երեկո՝ նվիրված «Սրբոց Վարդանանց զորավարացն մերոց հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կապարեցան ի մեծի պարեթիզմին»:

Զևավորված գեղեցիկ ավանդությամբ, հերթական անգամ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչությունը և ուսանողությունն իրենց բանախոսություններով ու գեղարվեստական համարներով հավուր պարզաճի ոգեկոչեցին նվիրական հերոսների հիշատակը: Հանդիսությանը ներկա էին Սրբազան Հայրեր, Մայրավանքի միաբանության կրթներ անդամներ, դասախոսներ և հյուրեր:

Առավել մեծ էր օրվա խորհուրդը, քանզի այդ օրը նաև Վեհափառ Հայրապետի անվանակոչության փոռն էր, որին ևս անդրադարձան օրվա բանախոսները:

Անշուշտ, հարկ չկար որևէ նոր բան ասելու մեր նահապետների սխրանքի մասին: Այդ սխրանքը ինչպես երեկ, նույնպես և այսօր նույնն է. այն անմահ է: Պարզապես հարկ է, որ յուրաքանչյուր սերունդ արժանին մատուցի անմահ նահապետներին: Ուրախությամբ պետք է նշենք, որ պարմական սխրանքի հանդեպ բոլոր սերունդների գնահատականը և վերաբերմունքը նույնն է, քանզի երբևէ չեն խամրում հերոսականության գույները: Ավարայրը մեր ոսկեվառ պարմության այն եզակի էջերից է, որտեղ փայլուն դրսևորվեց Թորգոմա ազգի միասնական ազատամարտի ոգին, որը զուգորդվելով հայի մարքի և ուժի հետ՝ պսակվեց հաջողությամբ:

Եվ ահա այսօր այդ հաջողության դափնին առանձնակի հպարտությամբ կրում ենք մենք՝ ճեմարանականներս, որպեսզի այն փոխանցենք հաջորդ սերնդին: Այսօր մեր հերթն է պարվով և հարգանքով պանծացնելու նվիրական հերոսների հիշատակը՝ վեր պարզելու ազատության դափնին, որպեսզի համայն աշխարհին պարզ լինի, որ ազատասեր հայը երբեք չի դադարի մաքառել իր հավաքքի ու ազատության համար:

Ահա այս մտորումներով խանդավառված և ոգեշնչված՝ սկսվեց հուշ-երեկոն:

Բացման խոսքով հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փեսուջ Արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը՝ ասելով. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին շար իմաստուն կերպով Տոնացույցի մեջ կարգավորել է Սրբոց Ղևոնդյանց քահանայից և Սրբոց Վարդանանց զորավարաց փոռները, որոնք լրացնում են միմյանց: Անհնարին է պարկերացնել Վարդանանց սխրանքը առանց Մահակ-Մեսրոպյան հանճարով հայացած Եկեղեցու և առանց Ղևոնդյանց դիմադրության ու գործակցության: Պարմական այս հանգամանքներն էլ նախապարտապետցին գաղափարական ու զինական այն դիմադրությունը, որ փեղի ունեցավ մեկուկես հազարամյակ առաջ ժամանակի ամենահզոր պե-

ություններից կրակապաշար Պարսկաստանի հետ: Ընդդիմանալով՝ հայ ժողովուրդը կարողացավ պաշտպանել մեր ազգային մնայուն, հավիտենական արժեքները, բայց մանավանդ՝ հայկական շեշտով քրիստոնեական ոգին և դիմագիծը»:

Տեր Նայրն ավելացրեց, որ հայ ժողովուրդը և մեր Ս. Եկեղեցին անվերապահորեն ճանաչում են պարսկական այդ դրվագները որպես մեր ժողովրդի անցյալի հերոսական պատմության, փառքի և քրիստոնեության հաղթության ոսկյա էջեր և «նորահրաշ պսակավորներին» արժանապես կարգել են ազգային-եկեղեցական սրբոց դասը:

Տեսուչ Տեր Նայրը շնորհավորեց նաև Նորին Սրբության անվանակոչության փոնը՝ հանուն Գևորգյան Նոզևոր Ընմարանի մաղթելով, որ «...Անասան և բարգավաճ թող մնա Նայաստանայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Թող փինեզերքի Արարիչը քաջառողջություն և բարօրություն պարգևի առաքելաշավիղ մեր Նայրապետին»:

Այնուհետև դաեխճում թևածեցին «Ի գէն» սրելծագործության հնչյունները՝ կապարմամբ Ռ. Շարբայանի դեկավարած երգչախմբի:

«Ավարայրի դասերը» պարսկական-ներածական ճառով հանդես եկավ Գևորգյան Նոզևոր Ընմարանի դասախոս, պարսկական գիությունների թեկնածու Գնել Գրիգորյանը՝ համատար ակնարկով ներկայացնելով այս ժամանակաշրջանի պարսաբաղաբական իրավիճակը և Վարդանանց կապարած անգնահատելի դերը: Ապա Գ լսարանի սան Արթակ Առնոդյանն արտասանեց Պ. Սևակի «Իմ ժողովրդին» բանաստեղծությունը, որին հաջորդեց երգչախմբի՝ Վարդանանց նվիրված «Նորահրաշ» շարականի և «Երգ մեռնող հայրենասիրի» սրելծագործության քաղցրալուր կապարումները: Ն. Շիրազի «Երգ Նայաստանի» բանաստեղծությունն արտասանեց Դ լսարանի սան Արսեն Նարությունյանը: Առանձնակի հուզումով էին համակված ճնմարանցիները, որի մասին են վկայում նրանց՝ իրար առանց դադարի հաջորդող գեղարվեստական համարները:

Մ. Եկմայանի «Պլպյուն Ավարայրի» հոգեթով փաղին հաջորդեց Գ լսարանի սան Նարեկ Եղիազարյանի ասմունքով հնչած՝ Վ. Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց» բանաստեղծությունը: Երգչախումբն այնուհետև կապարեց Մ. Եկմայանի «Լեռն» և Նարի Պարրիկյանի «Վարդան» սրելծագործությունները Զ լսարանի սան Էդգար սրկ. Նակոբյանի կապարմամբ: Դ լսարանի սաներ Էդուարդ Խաչատրյանը և Նայկ Ամիրյանն արտասանեցին Վ. Տերյանի «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին» և Պ. Սևակի «Իմ Նայաստան» բանաստեղծությունները: Այնուհետ ուսանողության անունից իր խոսքը ներկայաներին ուղղեց Ե լսարանի սան Նայկ ուրարակիր Բարսեղյանը:

«Այսօր՝ այս ազգային եկեղեցական փոռին, ինձ համար մեծ պատիվ է ավագ և կրթներ եղբայրներիս անունից մեր սրբի խոհերը և ջերմ ու անկեղծ շնորհավորանքները փոխանցել ազգիս շնորհագարդ Նայրապետին՝ Նորին Սրբության անվանակոչության փոռի առիթով: Նախևառաջ ցանկանում ենք նշել, որ Գևորգյան Նոզևոր Ընմարանի փեսայության և ուսանողության համար բարձր պատիվ է այս հուշ-երեկույթի կազմակերպումը: Պարսախական չէ, Վեհափառ Տեր, որ Ձեր նախորդ երանաշնորհ Նայրապետների և Ձեր բարձր փնօրինությամբ այն միայն մեզ՝ ճնմարանականներին է վերապահված, բանգի ո՛վ, եթե ոչ մենք, ի դեմս Ձերդ Սրբության, պարտավոր ենք լինել անխոնջ ջանակիրները և հետևորդները Վարդանանց նվիրական գաղափարի և ոգու:

Միրելի՛ ներկաներ, հերթական անգամ մեզ այս հոյակերպ կամարների ներքո ի մի է բերել Վարդանանց սրբազնագույն խորհուրդը: Նավաբվել ենք մեկ անգամ ևս մեր երակներում զգալու Ավարայրը և մրտվի մասնակից լինելու մեր նախնյաց հավատի ճակատամարտին:

Կասկածից վեր է, որ անմահ նահապակները յուրաքանչյուրիս համար սոսկ հիշողություն չեն, իսկ Ավարայրի ճակատամարտն է՝ Թորգոմա սերնդի խիզախության և անկուրում ոգու հերթական դրսևորումը: Վարդանանց կենդանի, մշտապես ապրող լեզենդ են, որ պատմության քառուղիներով և ճակատագրի ոլորապարտյուներով շարունակ առաջնորդում են հավատավոր հայորդիներին: Այս նույն լեզենդն էր, որ ոգեշնչման աղբյուր եղավ մեր օրերի արցախյան հերոսամարտի զինվորներին: Բոլորիս քաջ հայրնի է, թե ինչպիսի հզոր ազգեր և գերտերություններ են եկել ու անցել պարմության թռուրտի միջով, որոնք պարբերաբար արշավանքներ են կազմակերպել դեպի Նայաստան, բայց ի հեճուկս այդ ամենի՝ այսօր մենք ուրք ենք դրել երրորդ հազարամյակ՝ իբրև ազատ, անկախ Նայաստան: Այդ անկախության զինը մեր նահապակների թափած անգին արյունն է: Ինչպես երեկ, նույնպես և այսօր թող միշտ վառ ու պայծառ մնա Ս. Վարդանանց հերոսների հիշատակը մեր հոգիներում:

Աղոթք առ Բարձրյալն Աստված, որպեսզի Տերն անսասան պահի համայն հայության հոգևոր օրրանը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, և քաջառողջություն ու արևշաղ օրեր պարգևի ազգիս Նայրապետին: Մաղթում ենք արգասաբեր հովվական գործունեություն ի փառս Նայաստանյայց Եկեղեցու և նրա հավատավոր ժողովրդի»:

Նանդիսության գեղարվեստական մասն ավարտվեց Ռ. Պարկանյանի «Նիմի՛ էլ լռենք» բանաստեղծության Կոմիտասյան երգային մշակմամբ:

Նավարտ երեկոյի օրհնության խոսքով հանդես եկավ Գերաշնորհ Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը: Սրբազան Նայրը, անդրադառնալով Վարդանանց խորհրդին, նշեց, որ Ավարայրը եղել և մնում է մեր պարմության ամենաօրինակելի դասերից մեկը բոլոր սերունդների համար: Իր խոսքում Սրբազանը շեշտեց, որ եթե մեր նախնիներն այն ժամանակ մաքառում էին հավաքքի ու ազատության համար, ապա այսօր մենք նյարտավոր ենք պայքարել մեր լեզվի անաղարտության և ազգային դիմագծի համար, որոնք, ցավոք, հաճախ աղարտվում են օտարտրի արժեքներով:

Նանդիսությունն ավարտվեց Տերունական աղոթքով և «Պահպանիչ»-ով:

Ինչպես երեկ, նույնպես և այսօր մեզանից յուրաքանչյուրի սրբում թող միշտ վառ ու պայծառ մնա անմահ հիշատակն արդարոց: Բյուր օրհնություն քաջերի անմեռ հիշատակին:

ՆԱՅԿ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ